XXIII

ՆՈՐ-ԴԱՐ

XXIII

№ 45 Շաբաթ, 11 Մարտի

1883 – 1906

Շաբաթ, 11 Մարտի № 45

Բաժանորդագինը պոստի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., ամիսը 1 ր., հատով՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։
Խմբագրութեան գրասենեակը՝ Դրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի սօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բարձն 2 կ., անկլաւների համար առանձին հատուցման վճարմամբ։ Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է։

1906

ՆՈՐ-ԴԱՐ

(ԿՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Սոյն 1906 թուին լոյս է տեսնում քաղաքական-գրական ամենահին ընտ. «Նոր-Դար»-ը նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։

Ամբողջ ռուս կայսրութեան մէջ «Նոր-Դար»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ր., վեց ամսուանը՝ 6 ր., ամսականը՝ 1 ր., հատով՝ 5 կ.։ Արտասահմանի բաժանորդը վճարում է տարեկան՝ 40 ֆրանկ, վեց ամիսը՝ 25 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և օտար լեզուներով, բարը 2 կ., առաջին երեսումը 4 կ.։ Շատ անգամ կրկնուող յայտարարութիւնների համար մեծ զիջումն։

Բաժանորդ գրւում են Թիֆլիսում՝ «Նոր-Դար»-ի գրասենեակում, Դրիբոեդովսկայա փողոցում, № 14.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝ Тифлисъ, ред. „Норъ-Даръ“ կամ՝ Tiflis (Caucase), rédaction «Nor-Dar».

Ծանուցումն.—Թերթիս խմբագիրը մի տարի առաջ Պետերբուրգում իրաւունք է ստացել ընդարձակելու թերթի ծրագիրը, տալով թերթի մէջ պատկերներ, և առանձին ծրագրով լոյս հանելու շաբաթական պատկերապարդ յաւելուած։ Հարկ ենք համարում ծանուցանելու՝ հէնց որ թերթի մէջտեղները նկարեն, կբձեռնարկենք պատկերապարդ «Նոր-Դար»-ի հրատարակութեան և կուղարկենք «Նոր-Դար»-ի բաժանորդներին 10 բուբլի բաժանորդագնի հաշուով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ.—Տրագեդի... կոմեդի...
Մի կարեւոր խնդիր։
ՔՐՈՆԻԿՈՆ.—Թիֆլիս։ Գաւառ։ Ռուսիա։
Մեզ գրում են.—Շամախուց. Նոր-Բայազիտից։ Շուշուց։
Հայ-թաթարական համաժողովը Թիֆլիսում։
ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ։
ՔԱՂԱՔԱԳԱՆ.—Միացեալ Նահանգներ և Թիւրքիա։ Սուլթան Համիդի խզտութիւնը։
«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ։
ՏԵՂԵԿԱՏՈՒ։
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Թիֆլիս, 10 մարտի 1906 թ.

ՏՐԱԳԵԴԻ... ԿՈՄԵԴԻ...

—

Եթէ գեղարուեստի մասին փիլիսոփայաբար տրամադրուած կամենում լինէինք մեր սկսած խօսքը շարունակել, պիտի սկսէինք նրանից, թէ տրագեդին խակապէս կեանքի մէջ միայն մի փոքր տեղ է բռնում, կոմեդին է տիեզերքը, որ իւր մէջ ամփոփում է կեանքի տրագեդին, ամբողջ մարդկութիւնը. ողբը թաղուած է ծիծաղի, արտալի, անկեղծ ծիծաղի, անսիրտ, անմիտ և անհոգի ծիծաղի մէջ... Բայց մի՛թէ ժամանակ է փիլիսոփայական տրամադրութեան անձնատուր լինելու. դառն իրականութիւնը, արիւնի մէջ թաթախուած արցունքը քաշում է մեզ դէպի ինքը, դէպի հայ-թաթարական իրականութիւնը։

Երկար ամիսներ կատարուեց երկու ժողովուրդների միջև արիւնահեղ կռիւ, թալան, աւերումն, ասպատակութիւն՝ ամենքին յայտնի հայ-թաթարական ընդհարումները անուան տակ։

Դա տրագեդին էր, ողբերգութիւնը։ Թող այնտեղ էլի կատորուեն. այստեղ՝ մեր աչքի առաջ հայ-թաթարական ընդհարումներին յաջորդեց հայ-թաթարական հաշտութեան համագումարը։

Սա կոմեդին է.

Ինչո՞ւ համար էր այդ համագումարը և ի՞նչ շինեց նա, ի՞նչ հետևանքի հասաւ։ Ինչ բանի համար որ, ըստ երևոյթին, հաւաքուել էին երկու կռուող կողմերի ներկայացուցիչները, այն բանի մասին համագումարը ոչ բան շինեց և ոչ էլ մի որ և է հետեւանքի հասաւ։

Համագումարը պէտք է որ պարզէը հայ-թաթարական ընդհարումների պատճառները և հրապարակի վրայ դնէր ու մերկացներ ընդհարումների հեղինակներին, դրանց գոնէ դատի մատնէր, այնուհետև պէտք է որ թալանը վերադարձնուէր և կողոպտողները տուժէին յօգուտ վնասուածների։

Այդ բանի համար էին եկել համագումարին մասնակցելու հայ ժողովրդի ներկայացուցիչները. ի՞նչ վատահեցան դրանք։—Ոչինչ։

Իսկ մահմեդական ժողովրդի ներկայացուցիչները ինչ բանի համար որ գնացել էին համագումարին մասնակցելու, լիովին հասան իրենց նպատակին։

Նրանք կամեցան հանդիսաւոր կերպով ամեն կատարուած անօրինութիւնների մեղքի մեծ մասը ձգել հայերի վրայ, գրգռել կառավարութիւնը և հայութիւնից դուրս հասարակաց կարծիքը Ռուսիայում, ինչպէս և մահմեդական աշխարհներում հասարակական կարծիքը զրկելու հայերի դէմ և տասն և մէկ ամսուայ անցեալի վրայ մի մեծ քար ձգելու. և այդ բանին հասան նրանք։

Գումէթ համագումարը հաշտեցրեց կռուող կողմերը և ապագայ ընդհարումների առաջն առաւ։

Ամենևին ոչ. եթէ գեղեցիկ բառերով և համբոյրներով կարելի լինէր նախկին դրութիւնը վերականգնել, թշնամացող կողմերը հաշտեցնել, այդ հօ վաղուց պէտք է տեղի ունեցած լինէր, և հայ-թաթարական ընդհարումներն անապատ Բագու քաղաքի շրջանից չպէտք է դուրս գային։

Այդ մասին մենք ուշ ամիս առաջ խօսեցինք։

Ընդհակառակն հայոց համար հայ-թաթարական համագումարից յետոյ դրութիւնն աւելի ծանրացած է յօգուտ և ի փառս մահմեդականների։

Միակ միթթարականն այդ համագումարից մեզ համար այն է, որ իսկապէս կապ չունի համագումարի զբաղմանց հետ և առանց համագումարի էլ կարող էր այդ լինել և կը լինի։

Այդ այն է, որ յայտնեց վերջումը Փոխարքան երկու կողմի պատգամաւորներին. Թագաւոր Կայսեր կամքն է և հրամայել է վերջ դնել հայ թաթարական ընդհարումներին, և վերջ կը դրուի։

Ռուսները մի առած ունեն, որ, եթէ չենք սխալւում, ասում է. «Ուտուած երկնքումն է, թագաւորը՝ հեռու»։ Ափսոս, եթէ թագաւորը մօտիկ լինէր, անցեալ տարուայ փետրուարին վերջ տրբուած կը լինէը տրագեդիային, որ մինչև այս օրերս շարունակուեց։

Երիցիս կառավարութեան յայտնած այդ մխիթարական որոշումը գալիս է և անուղղակի հաստատում է այն մեր՝ էն գլխից կազմած հասոգմունքը, թէ թաթարները չէին սկսել և շարունակիլ կոտորածը, եթէ գիտենային, որ այդ արդիւնած է և հաճելի չէ, և յանցաւորը կը պատժուի։

Ամենքի համար, կարծում ենք, այսօր պարզ է, որ համագումարը, ինչ բանի համար, ըստ երեւոյթին և հայոց սեռակէտից, կոչուած էր գործելու, ոչինչ չշինեց, գեռ վնասեց հայոց գործին։

Մենք միշտ հայերի և թաթարների միջև խաղաղ դրացիութեան կողմն ենք եղել և այժմ էլ ենք. միայն այդչափ. աւելին կեղծաւորութիւն է, ինքնախաբէութիւն, կամեղի...

Մի համագումար, ինչ անդամներից էլ որ կազմուած լինի, նա չի կարող քաղցր խօսքերով, գեղեցիկ ճառերով հաշտեցնել երկու թշնամացած և միմեանց արիւնը խմող կողմերը—և այն էլ ինչպիսի կողմեր—որոնց ներքին աշխարհները տաբբերւում են ինչպէս ծովը ցամաքից։

Մի բան որ կարելի էր անել և պէտք է անել և որ կարող է ղլուխ գալ, այդ այն է, որ երկու կողմերը, փոխադարձ շահերի վրայ հիմնած միայն, սահմանում են իրենց յարաբերութիւնների համար մի տեսակ modus vivendi, իսկ երբորդը՝ կառավարութիւնը զինու, միմիայն այժմ վերջ է դնում ընդհարումներին. այն առաջ մաքին հետևելով, որ եթէ ուրիշ կերպ շարունակէ վարուել, վերջ է վերջոյ ինքն է տուժելու։

Այս այսպէս լինելով պէտք է ասել, որ համագումարի հաշտութեան կոմեդին բաւականին յաջող էր, և դերակատարներն էլ իրենց համապատասխան դերերումն էին։

Դրանց ինչ, թէ այնտեղ հարիւրաւոր ընտանիքներ վերջին չքաւորութեան մէջ են. դրանց ինչ թէ երեկուայ ունևոր հայերը անկոյ, գոյքից զրկուած, օրուայ ապրուստի կարօտ են մնացել. նրանց ինչ, թէ հայ կինը ողբում է իւր որդու կորուստը, հայ մայրը մաղերը քաշելով աբիւն արցունքով իւր միակաճար աղջիկն է որոնում և չէ կարողանում խլել աւազակ թաթարի ձեռքից. անմեղների արիւնը մուխ կարած երկինքը է բալձրանում, իսկ այստեղ համբուրւում են պատգամաւորները... Եւ երբ խօսքը հաշտութեան պատկանում, հոգևորական դերակատարները կլինակի իրենց դերերումն են։ Եւ տես, մահմեդական հոգեւորականը պատեհական բացականչութեամբ հրաւիրում է, որ թաթարը և հայը միմեանց հայ և թաթար չանուանեն (այդ կարող է երևի զրգիռ առաջ բերել), այլ կովկասեցի. այդ անունով սերտ կապւում են հայն և թաթարը...

Եւ միթէ կարող էր մահմեդական հոգևորականից յետ մնալ հայ վարդապետը. ժամանակը հասել էր և տեղն էր կատարելու. դերը—հաշտութիւն։

Եւ սա համակուած ընդհանուր մարդկային բարձր, էլի բարձր գաղափարներով՝ առաջարկում է հաստատել հայ-թաթարական լրագիը, այլ և հայ-թաթարական բարեգործական ընկերութիւն (եթէ մի քանի տարի առաջ թաթարները հայերին կոտորած լինէին այսօր մենք կը վայելէինք այդ հաստատութիւնների պտուղները)... Ինչ է կորցնում հոգևորական պատգամաւորը, նրան ինչ. հօ ծափահարում են և թաթար պատգամաւորները համբուրում են։

Կոմեդիանտներ...

—

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐ

—

Յօդուածիս նիւթ կազմող խնդիրը շատ կարեւոր խնդիր է, արժէ լուրջ ուշադրութիւն դարձնել։

Ներկայ ուսումն. տարուայ սկզբներից արդէն սկսեցին վերաբացուել մեր տարբական դպրոցները և ուսուցչութեան հրաւիրուեցին մեծ թուով նորաւարտ-երիտասարդներ։ Մի խնդիր որ զբաղեցնում է մեզանում շատ ուսանողների և երիտասարդ ուսուցիչների, այդ վնասուորագրութեան խնդիրն է, որից ազատուելու հնար է մտածում ամեն մի ուսման և գիտութեան նուիրուած մարդ և որի համար օրէնքներ ունի խմբագրած ինքը՝ շարձրը իշխանութիւնը։ Եւ երկրի օրէնքները մշակելիս խելօք և լուսամիտ գիւանապետները, որպէս զի իսպառ վտանգ չլինին ուսման և գիտութեան ճանապարհը, թոյլ են տուել, որ ուսանող երիտասարդներն ազատ լինին վնասուորագրութիւնից, մինչև իրենց ուսման աւարտը, իսկ աւարտողները բոլորովին ազատ լինին վնասուորական ծառայութիւնից, երբ անմիջապէս գործի կը մտնին երկրի պետական, ուսումնական և հասարակական հաստատութիւնների մէջ։

Այդ արտօնութիւններից առաջինը տրուած է և մեր հոգևոր դպրոցներին, այսինքն ճեմարանին, Ներսիսեան և միւս երեք թեմական դպրոցներին. սա նորութիւն չէ. իրենք այդ դպրոցների վարչութիւնները և սաները գիտեն և օգտւում են։ Մեր խօսքն այստեղ երկրորդ հարցի մասին է, այն է՝ իսպառ ազատել վնասուորական ծառայութիւնից մեր տարբական դպրոցների ուսուցիչներին։

Հնարաւո՞ր է այդ։

Դեռ անցեալ տարի, քանի մեր դպրոցները կառավարութեան ձեռքին էին, այդ արտօնութիւնից օգտւում էին այն տեղերում ծառայող հայ ուսուցիչները։ Այսօր էլ մի քանի գիւղերի անկիւններում դեռ նախկին դրութեան մէջ մնացած հատ ու կտոր մի-դասեան դպրոցները, թէկուզ շատ անշուք, 15—20 աշակերտով, պահել են այդ իրաւունքը. իսկ մեր մեծ դպրոցները (խօսքը ծխական ուսումնարանների մասին է, որովհետև ճեմարանը և թեմ. դպրոցները վայելում են արդէն այդ իրաւունքը), փարթամ երկդասեան, երեքդասեան դպրոցները չունեն այդ արտօնութիւնը, որովհետև հետևող չկայ, այդ մասին մտածող չկայ։ Եղան այնպիսի դէպքեր, որ երբ ուսուցիչները շրջանային դիրեկտորից խօսք առնելով՝ թէ ազատ կլսուղ են լինել՝ հեռացին հայոց ձեռքն անցած դպրոցում, տարուայ կէսին յայտնեցին նրանց թողնել ամեն բան և գալ զինուորական ծառայութեան։

Օրէնքն ասում է, որ «բոլոր մինիստրութիւնների իրաւասութեան տակ գտնուած դպրոցների ուսուցիչները կամ ասիաստական բարձրագոյն, միջնակարգ և տարրին դպրոցների ուսուցիչները, և այն դպրոցների, որոնք կամ կառավարչական են, կամ որոնց կանոնադրութիւնը (уставъ) հաստատուած է կառավարութիւնից, այնպէս էլ հոգևոր դպրոցների վերակացուները, ազատւում են զինուորական ծառայութիւնից, եթէ հինգ տարի առնուազը կը հանդ այդ տեսակ պաշտօնում»։

Ի՞նչ պէտք է անել ուրեմն։

Եթէ երկրի օրէնքները թոյլ են տալիս օգտուելու մի արտօնութիւնից, ինչո՞ւ չաշխատել շատով հասատատել տալ մեր դպրոցների կանոնագրութիւնը և ճանաչելի դարձնել կառավարութեան աչքում։

Եւ այդ բանն անողը մեր հոգևոր բարձր իշխանութիւնը պիտի լինի։

Յաջանք և ապաւենք։

Գօշ

ՔՐՈՆԻԿՈՆ

ԹԻՖԼԻՍ

Լուսաւորութեան մինիստրութիւնը հարցում է ուղղել Կովկասի փոխարքային, թէ վերջինս ղէմ չէ արդեօք, որ Վարշաւի ռէալական դպրոցի տեսուչ իշխ. Կ. Մ. Աբղութինսկի-Դոլգոռուկովը Թիֆլիսցի է։

—Անդրկովկասեան երկաթուղիների այն ծառայողները, որոնք ձերբակալուած էին երկ. վարչութեան կարգադրութեամբ, արձակուած են բանտարկութիւնից, բացի նրանցից, որոնք դատարանով մեղաւոր են ճանաչուած կամ որոնց գործի քննութիւնը չի վերջացած։

—Ժամ. ընդհանուր-նահանգապետը հրամայել է, որ կառապանները ցրնկնեն ևս գուրս գան լապտերներով (ի հարկէ չվառած), որպէսզի կարելի լինի տեսնել կառքերի թուահամարները։

—Միքայէլեան հիւանդանոցը լցուած լինելու պատճառով, նահանգապետը քաղաքային վարչութեանն առաջարկել է անյապաղ հոգալ ժամանակաւոր հիւանդանոց բանալու։

—Ազնուականների կալուածական բանկում մարտի 8-ին ածրդի էին հանուած 377 կալուածք, որոնցից 22-ը գտնւում են Թիֆլիսում։ Այս վերջիններից այդ օրը ծախուեց 9 կալուածք, որոնցից 5-ը պատկանում էր վրացիների, 2-ը ռուսների, 1-ը հայի և 1 ը գերմանացու։ Մնացած կալուածների համար երկրորդ անգամ ածուրդ է նշանակուած մարտի 29-ին։

—Սուխումի քաղաքագլուխ իշխ. Տատգերիձէ մարտի 9-ին ներկայացաւ փոխարքային իւր քաղաքի գործերի համար։

—Մարտի 10-ին լոյս տեսաւ Թիֆլիսի ռուս պատրիոտների կազմակերպութեան բերան «Голосъ Кавказа» լրագրի առաջին համարը։

—Քաղաքային վարչութիւնը որոշել է անդրկովկասեան երկաթուղիների վարչութեանը վճարել 12.349 ր. 25 կ. շաքարի և 1005 ր. ալիւրի համար, որ դեկտեմբերեան գործադուլի ժամանակ երկաթուղիների վարչութիւնը բաց էր թողել քաղաքի բնակչութեան կարիքների համար։

—Այն լուրը, թէ Վրաստանի էքզարխ Նիկոլայը փոխադրւում է Ռուսիա, չի հաստատւում։ Ջատկից առաջ նա վերադառնալու է Թիֆլիս։

—Մարտի 8-ին Օլգինսկայա փողոցում Տատօ Գաբաշվիլու տան մէջ գտնուած է երկու պատրաստի ռումբ։ Ձերբակալուած է այդ տան մէջ գտնուած «Բեռլին» հեւրանոցի տէրը՝ Խունդաձէ։

—Որովհետև պարզ չէ այն խնդիրը, թէ Պետական Դումայի ընտրութիւնների համար Թիֆլիսում ընտրելիք 80 լիազօրների թիւի մէջ են մտնում արդեօք բանուորների կողմից ընտրուելիք 2 լիազօրներն ևս, այդ խնդիրը պարզելու համար Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը դիմել էր Պետերբուրգի քաղաքային վարչութեանը, բայց Պետերբուրգից պարզ պատասխան չտացուելով, այժմ դիմուած է Մոսկուայի քաղաքային վարչութեանը։

—Փոխարքան մի հազար ր. է նուիրել երեխաց խնամատար ընկերութեան օգտին։

Պոլիցիական մասի փոխարքայի օգնական պենդել Շերբինկինը իբր պաշտօնական պատմից դէպի հիւսիսային Կովկաս՝ Նովորոսիյսկ-Բաթումի վրայով Թիֆլիս է վերադառնում մարտի 11-ին։

—Ազնուական դատական կողմից Պետական Խորհրդի անդամները ընտրելու համար Թիֆլիսի նահանգի ազնուականութեան մարտի 9-ի արտակարգ ընդհանուր ժողովում լիազօր ընտրուեցին իշխ. Իլիա Ճաւճաւաձէ և բժ. Մ. Դեկանոզ։ Առաջինն ստացաւ 40 ձայն մէկի դէմ, երկրորդը 35 ձայն 6-ի դէմ։

—Երդ. հաւ. Դ. Դիամանդիձէ թոյլատուութիւն է խնդրում Թիֆլիսում հրատարակելու ռուսերէն լիազուլ թերթ մի լրագիր «Волга» անունով։

— Թիֆլիսի ռուսաց սոցիալ-դեմոկրատների բանուորական կուսակցութիւնը 42 ձայնով 8-ի դէմ վճռել է մասնակցել Պետական Դումայի ընտրութիւններին։ Դումային մասնակցելու խնդիրը կրվճռուի յատկապէս։ Նոյն կուսակցութիւնը հագուստ վճռել է բօյկոտի ենթարկել Դուման, բայց օգուտ քաղել նախընտրական պայքարից կուսակցութեան օգտին ագիտացիա անելու համար։

—

ԳԱՒԱՌ

Թիֆլիսի գաւառապետ պ. Շանշաշիձը մարտի 2-ին և 3-ին կոգա գիւղն էր կանչել այդ գիւղի հայերին և վրացիներին և հարևան Բորչալուի գաւառի թուրքերին նրանց մէջ խաղաղութիւն հաստատելու համար։ Այդ նպատակով ճառեր արտասանեցին ինքը գաւառապետը, Տէր-Յովսէփեան քահանան, ազդեցիկ Մուբաշուլով աղալարը և իշխան Օրբելիանու կալուածների կառավարիչ պ. Յաբենկո։ Դրանից յետոյ հաւաքուածները երդումով խոստացան վերջ տալ ազգայնական թշնամութեան և ընտրեցին ամեն մի գիւղի կողմից հայ, թուրք և վրացի երեքական ներկայացուցիչ, որոնց յանձնարարեցին պարզել ապագայ բոլոր թիւրիմացութիւնների պատճառները և խաղաղացնել այդ ներկայացուցիչների միջոցով։

— Քութայիսի ժամ. ընդհ.-նահանգապետ պ. Ալիխանովը մի ծրագիր է ներկայացրել Քութայիսի նահանգում ռեֆորմներ մտցնելու մասին։ Այդ ծրագրի մէջ գլխաւոր տեղը բռնում են յիշեալ նահանգում յեզափորական շարժումը ճնշելու համար ձեռք առնելիք միջոցները, որպիսի նպատակով գաւառներում զօրքեր պիտի պահուն։

— Սուխումում ձերբակալուած վրացի գրող Սախոկիան ներկայումս արձակուած է։

— Պետական խորհուրդը վճռել է կարգում քաղաքային ինքնավարութիւն մտցնելու խնդիրը յանձնել Պետական Դումայի քննութեան։

— Գէն. Ալիխանովի կա ըդադրութեամբ, Քութայիսում ձերբակալուած է պետական բժիշկ Կորկաշվիլի։

—Արբշի երկրորդ գաւառամասում մարտի 6-ին աւազակների և սարաժանիկների միջև տեղի է ունեցել փոխադարձ հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանուած է մի աւազակ և մի սարաժանիկ։

—Բագուի ընտրողական շրջանում մուսուլմանները ուզում են Պետական Դումայի պատգամաւոր ընտրել Ամմէդ-բէկ Ագաևին և բժ. կ. Կարաբէգովին։

—Պետերբուրգի կայարանում ձերբակալուած է 19 տարեկան լեհացի մի աղջիկ, որը մօտ մի պուդ ծանրութեամբ պէտք է եղել տանելիս Մոսկուայից Բագու։

—Վլադիկաւկազի ռուսահպատակ մուսուլմանները կազմում են բարեգործական մի ընկերութիւն «Իտնաֆ» անունով։

—Գանձակի կայարանի 32 ծառայողներ, Մարտի 3-ին արձակուելով Թիֆլիսի մեռելի և նահանգական բանտերից, գնացել էին Գանձակ, բայց մարտի 8-ին նրանց նորից ձերբակալել են։

—Բագուի ընդ.-նահանգապետը մերժել է տեղական հայ բանուորական բիւրօյի ներկայացուցիչներ Տէր-Դանիելեանի և Առաքելեանի խնդիրքը, որով նրանք թոյլտուութիւն էին խնդրում գրասենեակ բանալ օգոստոսեան կոլուսանների մասին բանուորներից յայտարարութիւններ ընդունելու և բանուորներին խորհուրդներ տալու համար։

—Ջուլֆայի գաւառում ձերբակալուած և 3 ամիս ժամանակով բանտարկութեան է ենթարկուած Սարիջալինակի բէկը այն բանի համար, որ նա առնի կերպով թուրք գիւղացիներից տուրք էր հաւաքում թուրք զինուած խմբերի պահպանութեան համար։ Որքան որ այդ ձերբակալութիւն անհանգստութիւն է պատճառել տեղական բէկերին, նոյնքան և ուրախացրել է թուրք գիւղացիներին, որոնք բաւական չէ, որ քայքայուել էին հայ-թրքական կոտորածից, այլ և տեսիլքած էին ծախսեր անել զինուած խմբերի համար («Кав.»)։

—Շուշու թեմական դպրանոցի դասարանների բոլոր աշակերտները, ինչպէս հաղորդում է մեզ մեր թղթակիցը, մարտի 2-ին գործադուլ են արել, ներկայացնելով 19 կէտից բաղկացած պահանջներ դպրանոցի վարչութեանը։

Ի ՍՊԱՆԴՄԱՆ ԴԱՏԱՎՃՌԻՆ

— Ինչպես ասացի, ես ոչ մի մեղք չունեմ, ես միայն ուզում էի ինձ համար ապրուստի միջոց ձեռք բերել, ես ոչ մի հանցանք չեմ գործել, ես ոչ մի հանցանք չեմ գործել, ես ոչ մի հանցանք չեմ գործել...

Ահա այսպես էր կրկնում Ռոդրիգո Մարտինեսը, որ մեղադրվում էր մարդասպանության մեջ։ Նա ասում էր, որ ինքը ոչ մի հանցանք չի գործել, ոչ մի հանցանք չի գործել, ոչ մի հանցանք չի գործել...

Ռոդրիգո Մարտինեսը 25 տարեկան երիտասարդ է, ունի գեղեցիկ, սիրուն դեմք, սև, գանգրահեր մազեր, սև, խոշոր աչքեր, որոնք ամենայն ուշադրությամբ հետևում են դատավարության ընթացքին։ Նա հագած է եղել սև կոստյում, սպիտակ վերնաշապիկ և սև փողկապ։ Նրա ամբողջ կերպարանքը ներկայացնում է մի ուսանողի, որ ոչ մի կապ չունի ոճրագործության հետ։

Ռոդրիգո Մարտինեսը մեղադրվում է Ֆրանսիսկո Ռոդրիգեսի սպանության մեջ։ Ֆրանսիսկո Ռոդրիգեսը ունեցել է մի խանութ, որտեղ վաճառել է ծխախոտ, սիգարներ, սիգարետներ և այլ մանր ապրանքներ։ Ռոդրիգեսը ամուսնացած է եղել և ունեցել է մի որդի, որ այժմ 10 տարեկան է։ Ռոդրիգեսը սպանվել է 1905 թվականի հոկտեմբերի 11-ին, իսկ Մարտինեսը ձերբակալվել է 20 օր հետո։ Ռոդրիգեսի սպանության մեջ մեղադրվում է նաև Մարտինեսի կինը, որ ամուսնացած է եղել Ռոդրիգեսի հետ։

— Ես ոչ մի հանցանք չեմ գործել, ես ոչ մի հանցանք չեմ գործել, ես ոչ մի հանցանք չեմ գործել...

Ահա այսպես էր կրկնում Ռոդրիգո Մարտինեսը, որ մեղադրվում էր մարդասպանության մեջ։ Նա ասում էր, որ ինքը ոչ մի հանցանք չի գործել, ոչ մի հանցանք չի գործել, ոչ մի հանցանք չի գործել...

Ռոդրիգո Մարտինեսը 25 տարեկան երիտասարդ է, ունի գեղեցիկ, սիրուն դեմք, սև, գանգրահեր մազեր, սև, խոշոր աչքեր, որոնք ամենայն ուշադրությամբ հետևում են դատավարության ընթացքին։ Նա հագած է եղել սև կոստյում, սպիտակ վերնաշապիկ և սև փողկապ։ Նրա ամբողջ կերպարանքը ներկայացնում է մի ուսանողի, որ ոչ մի կապ չունի ոճրագործության հետ։

Ռոդրիգո Մարտինեսը մեղադրվում է Ֆրանսիսկո Ռոդրիգեսի սպանության մեջ։ Ֆրանսիսկո Ռոդրիգեսը ունեցել է մի խանութ, որտեղ վաճառել է ծխախոտ, սիգարներ, սիգարետներ և այլ մանր ապրանքներ։ Ռոդրիգեսը ամուսնացած է եղել և ունեցել է մի որդի, որ այժմ 10 տարեկան է։ Ռոդրիգեսը սպանվել է 1905 թվականի հոկտեմբերի 11-ին, իսկ Մարտինեսը ձերբակալվել է 20 օր հետո։ Ռոդրիգո

Տարածվում է Թիֆլիսում և գավառներում։

Խմբագրություն և տպարան՝ Ղազարյան փող. № 6։

Հրատարակվում է շաբաթական 3 անգամ՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը։

Ընդունվում են բոլոր տեսակ հայտարարություններ։

Գինը տարեկան 5 ռուբլի, կես տարվա համար 2 ռ. 50 կ.։

Առանձին համարի գինը 5 կոպ.։

ՀԱՅԿ

ՀԱՅԿ

ОРГАНЪ АРМЯНСКОЙ СОЦІАЛЬ-ДЕМОКРАТІИ

Выходитъ въ Тифлисѣ 3 раза въ недѣлю: по понедѣльникамъ, средамъ и пятницамъ.

Адресъ редакціи: Тифлисъ, ул. Казарянская № 6.

Подписная цѣна: на годъ 5 р., на полгода 2 р. 50 к.

Отдѣльный номеръ 5 коп.

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՁՈՒՄԱՇՏԷՐԱԺԱՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐՈՒԹԻՒՆ

„ԿԵԱՆՔ“

Քաղաքական, հասարակական եւ անտեսական օրաթերթ,

որ քաղաքական պայմանների չնորհիւ

ա ռ ա ջ ի մ

կը հրատարակուի իբրև

— Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ —

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Է

Թիֆլիսում տարեկան . . . . 2 ր. 50 կ.
Թիֆլիսից դուրս » . . . 3 ր. —
Արտասահման » . . . . 4 ր. —
Թիֆլիսում ամսական . . . . — 20 կ.
Թիֆլիսից դուրս » . . . . — 30 կ.
Արտասահման » . . . . — 40 կ.
Թիֆլիսում հատով . . . . — 5 կ.
Թիֆլիսի դուրս » . . . . — 7 կ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Кіякъ». Արտասահմանից՝ Tiflis, Rédaction «Kiauk».

Խմբագիր-Հրատարակիչ՝ Բ. ԻՇԽԱՆԵԱՆ.
(փ.) *1—3*

Վաճառումից գոյացածամբողջ գումարը յատկացւում է Բագուից Թիֆլիս գաղթած չհաւար հայ գիւնագիտ ատակերտների ու ատակերտուհիների օգին։

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄԻՄ Է

ՊՐՕՖ. ԿՐԻՄՍԿԻ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՁԽԱՐՀՆ ՈՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ

Հեղինակից յատուկ թոյլատրած թարգմանութեամբ

ԲԱՐԿԷՆՎԱՐԴՊԵՏԻ

(Ժզ+170 երես, Գինը 60 կոպ.)

Դիմել Թիֆլիսի Գրավաճառներին և թարգմանչին՝

Սր. Էմիձնէ Архимандриту Бабкену

(113) *12—6*

ԹԻՖԼԻՍ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՀԻՒՐԱՆՈՑ

ԱՆԳԼԵՏԵՐ

ՀԻՒՐԱՆՈՑԻ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

ճաշ՝ 2 տես. կերակուր — 50 կոպ.
ճաշ՝ 3 » կերակուր — 60 կոպ.
ճաշ՝ 4 » կերակուր — 80 կոպ.

—

Նախաճաշիկ և ընթրիք—ցուցակագրով։

—

Հիւրանոցում կահաւորուած սենեակներ— 1 րուբլուց սկսած։

ՕՄՆՆՑՆԵՏՐ։
10—10

ՄԻՋՄԱՐԿԻ ԵՒ ԵՐԻԿՄՈՒՆՔԻ

ՀՈՆՈՐԷՑ

ՀԻՒԴԱՊԱՏԻ Ն ԳԵՄ

ԱՆՏԻՏՈՏԷՆ ԼՈՒԽԵՐԻ

բուսական էքստրակտ ներքին գործածութեան համար։ Վաճառւում է դեղատուներում և դեղատնային պահեստներում։ Ներկայացուցիչը Ռուսիայի համար է. Իւրգենս, Москва, Волхонка. Պահեստը՝ Դեզատնային Ապրանքների Կովկասեան Ընկ.

M. 25535. *12—3*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

Լօրուայ վիճակի Յովհաննաձոր գիւղի ծխատէր Յարութիւն քահանայ Մելիքսէթեան Խաչատուրեանցը սրանով ունի յայտարարել ի գիտութիւն ընդհանրութեան որ սրանից մէկ ամիս առաջ կորել է իւր որդի Միքայէլի ծննդական վկայականը, որն ուղարկել էր մի ծանօթի ձեռքով Նեռսէսեան դպրոցի վարչութեանը, ուր ուսանում է նրա որդի Միքայէլը։ Դիմողներին խնդրում է վերադարձնել, որի համար գանողը կը ստանայ չնորհակալութիւն։

Հասցնել Թիֆլիս կոնսիստորիային։
10—8

ՋԱՇԱՐԱՆ „ՄՈՍԿՈՒԱ“

Նոր բացուած «ՄՈՍԿՈՒԱ» ճաշարանում կան ամեն տեսակ համեղ կերակուրներ, աժան գներով։ Նոյն տեղը կայ թէյ, կաթ, սուրճ, շոկալադ, կակաօ և այլն...։

Անկիւն Հայոց բազարի և Ակիմովսկայա փողոցների՝ տուն Քաւթարաձէի, Մանթաշեանի նոր քարուանատարայի հանդիպ։

(117) *10—5*

ՉՓՆԱՂ

ԵԼՐԱՒՐ ԵՒ ՏԸՐՏՈՒՆՔ

Խմբագրատան կից կանանց Զքնաղ դպրոց գրաշարատնոցում փետրուարի 15-ից երկրորդ դասաշրջանի աշակերտուհիների ընդունելութիւնն է, որ տեւում է չորս ամիս։

Վճարը 30 րուբլի

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Սրանով յայտարարում է, որ սոյն տարուայ մարտի 6-ին, օրուայ ժամը 12-ին, նշանակուած է աճուրդ շինելու համար կոյուղի Ֆէօդոսիևսկայա փողոցում (Կոլիչևայա ըակով)

140 սաժ. բետոնի խողովակ 0,33×0,22 կտրուածքով
25 ,, ,, ,, 0,16×0,10 ,,
4 գիւտղական հոր։

Գրաւոր յայտարարութիւնները, որոնց մէջ ցոյց տրուած պիտի լինեն վերոյիշեալ աշխատանքների արժէքները պէտք է տրուեն փակ ծրարներով մինչև սոյն տարուայ մարտի 6-ը։

Աճրգին մասնակցել ցանկացողները կարող են պայմաններին տեղեկանալ ամեն լի օր ցերեկուայ ժամը 12—2-ը։

(118) *3—2*

Книга

ПРАВДА о ГАПОНѢ

и 9-мъ Январѣ.

Н. СИМБИРСКАГО.

Содержаніе: I. Психологія русскаго рабочаго вопроса. II. Гапонъ и петербургскіе рабочіе передъ 9 Января. III. Дѣятельность соц.-демократической партіи въ рабочемъ вопросѣ. Гапонъ и революціонеры. IV. Почему Георгій Гапонъ разошелся съ заграничными революціонными организаціями.

Исповѣдь Гапона, имъ написанная. Въ книгу эту вошли новые. еще нигдѣ не опубликованные документы и факти, освѣщающіе революціонное движеніе и роль Георгія Гапона здѣсь и заграницей.

ЦѢНА 1 РУБЛЬ.

20% чистой прибыли предназначается въ пользу организацій „Русскихъ фабрично-заводскихъ рабочихъ“. Отчетъ будетъ опубликованъ въ СПБ.

Книжные магазины и склады пользуются уступкой. Складъ изданія исключительно у автора; съ заказами обращаться С.-Петербургъ, Каменноостровскій просп., домъ 27, кв. 1.

Н. В. НАСАКИНУ-СИМБИРСКОМУ.

ՀԱՄԱՐԵԱ ԶՐԻ, ԶՐԻ!!

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՏՐԻԿՕ

Շատ լաւ գործնական ճոթ ապամարդկանց էլէգան հագուստի համար, գոյնը սեւ՝ նոր մոդային մոխրագոյն փայլուն բծերով. գործարանն ուղարկում է այս ճոթից ապամարդու լիակատար հագուստի համար 4 և կէս արշին կտոր 5 ր. 75 կ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏՐԻԿՕ

Նորնպիսի ճոթ, մէայն բարձր յատկութեան, 4 և կէս արշին կտորը 7 րուբ. 10 կոպ.

Այսպիսի երեք կամ աւելի հագուստի ճոթ ապապրած ժամանակ ուղարկւում է գրանց հարկաւոր աստառը

ԲՕԼՕՐՕՎԻՆ ԶՐԻ.

Փաթաթելը գործարանի հաշուին։—Ճանապարհածախքը ապապրողի հաշուին ըստ նրա յանկութեան վերագիր վճարով։—Բայց եթէ ապապրողն ուղարկում է ապրանքի արժէքը, այն ժամանակ ճանապարհածախքը գործարանի հաշուին։

Խնդրում ենք դիմել այս հասցէով՝

Фаб. камв. и шерст. изд. Т-во Лодзинской Промышленности

„ПРОГРЕСЪ“ ЛОДЗЬ.

M.) 19425 Նամագրութիւնը միմիայն ռուսերէն լեզուով։ *1—1*

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ՍՏՈՒԿԵՆ ԵՒ ԸՆԿ.

ՖԱՓՈՒԽ

Իւր սեպհական պահեստներում մշտապէս ունի

Երկաթ ամեն տեսակի և ձևի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, угольное и оцинкованное) երկկողմանի երկաթէ գերաններ, ջրհոն մեքենաների «կամերոն» և «Դուպլեքս», ռուսական գազային խողովակներ և դրանց զօդաւորող մասեր, ֆիտինգսներ և այլն։ Դուրգեր զանազան տեսակի (станки токарные, сверлильные, строгальные и др.)։ Մամուլներ ծակող և ուրիշ տեսակներ։ Գողպատ՝ դուբեր, կտրոցներ և գործիքներ շինելու համար։ Մետաղեայ փոկեր, տպիւս անձալ (огнеупорный), «Գլէնբոյդ» և կաւ, բևեռներ заклепки котельныя, пистонныя)։ Գամեր զանազան տեսակի, պտուտակներ (болты) և գայկաներ, պղինձ թերթաւոր և կտորներով, պղնձէ խողովակ ը, թուղթ ասֆալտած (асфальтированныя խողովակներ ջրուղիների համա-ե) դրանց զօդաւորող մասեր։ Անագ ձողաւոր, արճիճ թերթաւոր և կտորներով, ցինկ թերթաւոր և այլն։ Պարագաներ (арматура) պղնձեայ, բրօնզեայ ձուլածոյ։ Գործիքներ զանազան տեսակի, բեռիկ առարկաներ, ցեմենտ։ Նմանապէս տեխնիքական ամեն տեսակի մեատներ և իրեր։

Ներկայացուցիչ է

ԲՈՒՍՏՈՆ. ՊՐՈԿՏՈՐ և ԸՆԿ.

Շոգեմեքենաներ
Կեռօսինեայ } *շարժիչ մեքենաներ*
Նաւթեայ }
Շոգեատարներ (локомобилы)
Ձրդուվներ (катки для шоссе)

ՐԻՒՔԱՐԴ ՄԱՅՏԵՐ

Ներկեր զանազան տեսակ
Արճիճեայ ձերմակուց (бѣлила)
Արճիճեայ սուրբ (сурикъ)

ԳԵՐՄԱՆ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ-ՄԱՆՆԵՍՄԱՆՆԵԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ

Միակ ներկայացուցիչը

Խողովակները առանց կարի, գալեայ, նաւթահորերի, ծխնելուղի և ջրաքաշական։ Նմանապէս և ամբակուռ խողովակներ խտացուցիչների համար (компрессоръ)։

Կայմեր (мачты) անկար խողովակներից, էլեքտրական ուղիների լուսաւորութեան և այլ շինուածքների համար սիւներ հեռախօսական, հեռագրական լարերի և շանթարգելների համար։

Ընդունում է լիովին կառուցուիլ տախտակի, բուրդ լուանող և ուրիշ գործարանների. նմանապէս ընդունում է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիքական պիտոյքների վերաբերեալ։

Իւրաքանչիւր հարցերին պատասխանում է անմիջապէս։

Արժէքների ցուցակները ուղարկւում են ձրիաբար։ *(կ.) 52—9*

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտարարում է իւ գիտութիւն ընդհանրութեան, որ I քաղաքամասում, Մեծ և Փոքր Սուզչինայա փողոցների անկիւնում, յատկապէս կառուցուած նոր շէնքի մէջ, մատղութիւն կայ բանալու Ն. Ե. Զուբալովի նուիրաբերած դրամագլխով

Ա Ղ Ք Ա Տ Ա Ն Ո Յ

աղքատ մէջոց հայթայթելու ընդունակութիւնից զրկուած արական սեռի աղքատ քրիստոնեաների համար երեսուն մահճակալով, որոնցից տասնական մահճակալ յատկացուած կը լինի հետեւեալ դասուածութեանց պատասխանող անձերին՝ պարապետաւ, հռոմէական-կաթոլիկ և հայ-լուսաւորչական Աղքատանոցը մտնել ցանկացողները խնդիրքով դիմում են Թիֆլիսի քաղաքային վարչութեանը, ներկայացնելով դոկումենտներ իրենց անձի, դասակոչութեան, աղքատութեան մասին և բժշկական վկայական աշխատանքի անընդունակութեան մասին։ Աղքատների ընդունելութեան խնդիրքները կընդունուին մինչև ապրիլի 1-ը 1906 թ.։

(112) *դունուեն մէայն մինչև ապրիլի 1-ը 1906 թ.։* *3—2*

ՀԱՄԱՐԵԱ ԶՐԻ, ԶՐԻ!!

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՏՐԻԿՕ

Շատ լաւ գործնական ճոթ ապամարդկանց էլէգան հագուստի համար, գոյնը սեւ՝ նոր մոդային մոխրագոյն փայլուն բծերով. գործարանն ուղարկում է այս ճոթից ապամարդու լիակատար հագուստի համար 4 և կէս արշին կտոր 5 ր. 75 կ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏՐԻԿՕ

Նորնպիսի ճոթ, մէայն բարձր յատկութեան, 4 և կէս արշին կտորը 7 րուբ. 10 կոպ.

Այսպիսի երեք կամ աւելի հագուստի ճոթ ապապրած ժամանակ ուղարկւում է գրանց հարկաւոր աստառը

ԲՕԼՕՐՕՎԻՆ ԶՐԻ.

Փաթաթելը գործարանի հաշուին։—Ճանապարհածախքը ապապրողի հաշուին ըստ նրա յանկութեան վերագիր վճարով։—Բայց եթէ ապապրողն ուղարկում է ապրանքի արժէքը, այն ժամանակ ճանապարհածախքը գործարանի հաշուին։

Խնդրում ենք դիմել այս հասցէով՝

Фаб. камв. и шерст. изд. Т-во Лодзинской Промышленности

„ПРОГРЕСЪ“ ЛОДЗЬ.

M.) 19425 Նամագրութիւնը միմիայն ռուսերէն լեզուով։ *1—1*

Մինչ 1906 լոյսն տեսել

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴԱՂ ԵԱՆԻ

հետեւեալ աշխատութիւնները՝

ՋՕՆ ՍՏԻՒԱՐՏ ԲԼԷԿԿԻ, պրօֆէսսօր. «ՄՏԱՒՈՐ, ՓԻՋԻՔԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ» (երկրորդ տպագրութիւն, 60 կ.
2. Ժ. ԲԱՄԲՈՍՕՆ, պրօֆէսսօր. «ՄԱՐԴԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՎՐԱՑ ՀԻՄՆՈՒԱԾ» . . . . 40 կ.
3, ԼՈՒԻԶԱ ԲԻԻԽՆԷՐ. «ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ» 40 կ.
4. Ա. ԴԵԲՐԻԵԼԻ. պրօֆէսսօր «ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ» 60 կ.

Բ. Դրամատական՝

Գ. ԷՔԵՐՄ՝ «Փարաւոնի աղջիկը» պատմ. վէպ. . . . . 80 կ.
2. ՄԱՐԿ ՏՈՒԷՆ. «Իշխանն ու աղքատը» պատմ. վէպ. . 1 ո. — կ.
3. ԷԴԳԱՐ Պ0. «Ոսկի բզէզ» ժողովրդական վէպ. . . . . 20 կ.

Գ. Մանկական՝

1. ԲՈՒՒԷՆ. «Փայլուն կոպէկ» երկրորդ. տպագ. . . . . 25 կ.
2. ԱՆԴԵՐՍԷՆ «Մեղամայր» . . . . . 15 կ.
3. ՏՕՊԵԼԻՈՒՍ «Արծաթի մանկթի պատմութիւնը» . . . . 15 կ.
4. ԿԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ «Օմոլ . . . . . 8 կ.

—

Մամուլի տակն է և չուտով լոյս կը տեսնի կոմս Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅ «ԱՍՏԱՐԽԱԴՈՆ» թագաւոր Ասորւոց. պատմ. վէպ. հրատ. Գ. Բաբաբեանի.

Ճանապարհածախքը թարգմանչի վրայ։ Տասն օրինակ գնողներն ստանում են 20% զեղչ.

Ցանկացողները դիմում են Թիֆլիսի զրավաճառներին և թարգմանչին հետեւեալ հասցէով՝—Учителю Григорію ШахъБудагянцъ, Шереметьевская улица, соб. домъ (10 участ.) Дидубе. *15—8*

ГУНЯДИЯНОСЪ

Հանքային բնական դառն ջուր

Գլխաւոր պաշտօնական պահեստ

ԱՄԵՆԱԼԱՒ ԼՈՒԾՈՂԱԿԱՆ

ՆՈՒՐԲ, ՀԱՄՈՎ, ԱՆՊԱՅՄԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՂ.

ԳԵՐԱԶԱՆՑ ՄԻՋՈՑ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՍԱՀԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒՆՆԵՐ.

ԱՐԻՒՆԸ ԳԼՈՒԽՆ ԸՆԿՆԷ ԺԱՄԱՆԱԿ,

ԳԻՐՈՒԹԵԱՆ ԴԷՊՈՒՄ ՍՏԱՄՈՔՍԻ ՄԱՆ-ԳԱՐՄԱՆ, ՓԱՅՏԱՂԱՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ և այլն։

Խնդրում է ուշադրութիւն դարձնել **САКСЛЕНЕРЪ** *ֆիրմային ամեն մի պրուակի վրայ։*

Երեսնամեայ փորձն ապացուցել է, որ Գունեադի ետնոտ ջուրը գերազանցում է այս տեսակ միւս բոլոր դեղերից։ Ծախւում է ամբողջ աշխարհի բոլոր դեղատներում և դեղատնային մագազիններում։

(M.) 145599. *12—3*

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտարարում է իւ գիտութիւն ընդհանրութեան, որ I քաղաքամասում, Մեծ և Փոքր Սուզչինայա փողոցների անկիւնում, յատկապէս կառուցուած նոր շէնքի մէջ, մատղութիւն կայ բանալու Ն. Ե. Զուբալովի նուիրաբերած դրամագլխով

Ա Ղ Ք Ա Տ Ա Ն Ո Յ

աղրուստի մէջոց հայթայթելու ընդունակութիւնից զրկուած արական սեռի աղքատ քրիստոնեաների համար երեսուն մահճակալով, որոնցից տասնական մահճակալ յատկացուած կը լինի հետեւեալ դասուածութեանց պատասխանող անձերին՝ պարապետաւ, հռոմէական-կաթոլիկ և հայ-լուսաւորչական Աղքատանոցը մտնել ցանկացողները խնդիրքով դիմում են Թիֆլիսի քաղաքային վարչութեանը, ներկայացնելով դոկումենտներ իրենց անձի, դասակոչութեան, աղքատութեան մասին և բժշկական վկայական աշխատանքի անընդունակութեան մասին։ Աղքատների ընդունելութեան խնդիրքները կընդունուին մինչև ապրիլի 1-ը 1906 թ.։

(112) *դունուեն մէայն մինչև ապրիլի 1-ը 1906 թ.։* *3—2*

ВОКРУГЪ СВѢТА

ХУДОЖЕСТВЕННЫЙ И ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛЪ.

Съ 1906 г. журналъ будетъ выходить подъ новой редакціей, которая ставитъ своей задачей, НЕ ИЗМѢНЯЯ ПРОГРАММЫ ЖУРНАЛА, сдѣлать его отвѣчающимъ современному освободительному движенію родины. Въ журналѣ найдутъ себѣ мѣсто очерки и картины, рисующіе современную общественную жизнь культурныхъ странъ. Широкимъ слоямъ населенія Россіи, вступающей въ новый періодъ своей исторіи, необходимо ознакомиться съ тѣмъ, какъ живутъ государства, идущія впереди насъ по пути прогресса, какъ они устроили свою жизнь на началахъ СВОБОДЫ, РАВЕНСТВА и БРАТСТВА.

Въ теченіе 1906 г. подписчики получатъ:

50 №№ художеств.-литерат. журнала. Романы.—Повѣсти.—Путешествія.—Иллюстраціи.—1.200 столбц. текста.

ПОБОРНИКИ ПРАВДЫ. Альбомъ портретовъ дѣятелей русскаго освобожденія.

24 КНИЖКИ РОМАНОВЪ **ЭМИЛЯ ЗОЛЯ,** куда войдутъ слѣдующія произв., пользующ. всемірной извѣстн. писателя-реалиста: РИМЪ.—ЛУРДЪ.—ПАРИЖЪ.—ТРУДЪ.—УГЛЕКОПЫ.—ПРАВДА.

12 выпусковъ. Полный иллюстрированный общедоступный ЛѢЧЕБНИКЪ знаменитыхъ РУССКИХЪ ПРОФЕССОРОВЪ-МЕДИКОВЪ. **КНИГА ЗДОРОВЬЯ** объем. болѣе 1.000 печати. стран., съ 500 оригинальными рисунками. Подъ редакціей слѣдующихъ проф.-медиковъ: Н. П. Гундобина, С. І. Залѣскаго, А. А. Кадьяна, И. К. Коновнина, П. Я. Розенбаха, лейбъ-окул. Н. И. Тихомирова и Г. Ю. Явейна. Въ отдѣльной продажѣ „КНИГА ЗДОРОВЬЯ“ стоитъ ТРИ рубля.

Кромѣ того, съ приплатою ОДНОГО рубля подписч. „Вокругъ Свѣта“ получатъ ЦѢННОЕ приложеніе—художественно-исполненную въ нѣсколько красокъ картину извѣстн. художн. Н. П. Богданова-Бѣльскаго **„ГАЗЕТА ВЪ ДЕРЕВНѢ“,** снимокъ съ послѣдней его картины, обратившей на себя всеобщее вниманіе на Передвижн. выставкѣ въ Москвѣ и Петербургѣ въ 1906 г. и посвященной изображенію отношенія нынѣшней деревни къ послѣднимъ событіямъ русской жизни. Оригиналъ, съ котораго воспроизведенъ снимокъ, пріобрѣтенъ съ Передвижной выставки за 3.000 рублей.

Цѣна на годъ	Цѣна на годъ
безъ картины „Газета въ деревнѣ“	съ картиной „Газета въ деревнѣ“
4 Р. съ перес. и доставк.	**5** Р. съ перес. и доставк.

ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА: при подпискѣ 2 р., къ 1 апрѣля 2 р., къ 1 іюля 1 р.

Адресъ: Москва, Петровка, д. Матвѣевой. Редакція журнала „Вокругъ Свѣта“.

Изданіе Т-ва И. Д. СЫТИНА.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1906 Թ.

„Մ Ո Ւ Ռ Ճ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան VI տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսիա եւ Պարսկաստան—տարեկան 10 ր. կէս տարին 6 ր., Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր. (18 ֆ.)։

ՀԱՏՈՎ ՀԱՄԱՐԸ ՄԻ ՐՈՒԲԼԻ

Ծանօթութիւն.—Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբլի։ Հայոց գաղ. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, մինչև ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 րուբլի Ռուսիայում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրենց յարմար է։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատունը (Ձավճավաձեան փողոց տ. № 12).

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ“. *Արտասահմանից՝* Tiflis, Rédaction de la revue „Murtch“.

1906 Թուականի նոր բաժանորդները կը ստանան 1905 Թ. նոյեմբեր դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրիաբար։

(Փ.) *3—2* *Խմբագիր՝* Լեւոն Յարգսեան